



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ԴԱՏԱՍԽԱՏԱՐ
Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ



«24» 06 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

**ՀՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ 0109-21

Ձեռնարկող՝

«Արմսպրոյ» ՍՊԸ

ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Միսիան, Ա. Մինասյան 15

Գործունեությունը՝ Արարափի մարզի, Փոքր Վեդի գյուղի, Մարգար Հովհաննիսյան 26 հասցեում գտնվող դպրոցի քանդման և նոր դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայլ

ՀՀ, Արարափի մարզ, գ. Փոքր Վեդի, Մարգար Հովհաննիսյան փողոց 26

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝

Խ. Մարտիրոսյան



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԵԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵԱԿԱ ՄԻԶԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

Թիվ ԲՓ 0109-21

24 > 06 2021 p.

«Արմսպրոյ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Արարագի մարզի Փոքր Վեդի գյուղի, Մարգար Հովհաննիսյան 26 հասցեում գտնվող դպրոցի քանդման և նոր դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ Փաստաթղթի տեսակը՝

Գործունեությունը՝
Տեղադրման վայրը՝

«Արմստրոյ» ՍՊԸ
Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական
գնահատման հայտ
«Գ» կատեգորիա
<< Արարատի մարզ, գ. Փոքր Վեդի, Մարգար
Հռվիաննիսյան փողոց 26

Ներածական մաս. Գործունեության նպատակն է Արարատի մարզի, Փոքր Վեդի գյուղի, Մարգար Հռվիաննիսյան փողոց 26 հասցեում գտնվող դպրոցը քանդել և տեղում կառուցել 8 մասնաշենքերից բաղկացած նոր դպրոց:

Նախագծի մշակումը կատարվել է «Արմստրոյ» ՍՊ ընկերության կողմից: Նախագծման համար հիմք են հանդիսացել Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի տեխնիկական առաջարկանքը և համայնքի կողմից տրված նախագծման թույտվությունը:

Գործունեությունն իրականացվելու է Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակներում (ԴՍԱԲԾ)¹ Ասիական Զարգացման Բանկի (ԱԶԲ) աջակցությամբ և ՀՀ կառավարության աջակցությամբ՝ արդյունքների վրա հիմնված վարկավորման (ԱՀՎ) մոդելի կիրառմամբ:

Ծրագիրը համահունչ է <<կառավարության «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության» նպատակների և ուղղված է անհատական, հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:

Դպրոցների Սեյսմիկ անվտանգության բարելավման (ՍԱԲ) ծրագրի համար մշակվել է Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ (ԲԳՈՒԾ) փաստաթուղթը: Փաստաթղթի նպատակն է համատատեղել <<օրենսդրական նորմերի և ԱՀԲ բնապահպանական անվտանգության մեխանիզմների պահանջըները: Փաստաթուղթը մշակվել է որպես ՍԱԲ ծրագրի բնապահպանական գնահատման ուղեցուց Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏՀՀ) համար, որը հանդիսանում է Ծրագիրն իրականացնող մարմինը: Փաստաթուղթը ներառում է նաև Ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները, դպրոցների ընտրության չափանիշները, կազմակերպումը և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ Ծրագրի իրականացման նախագծման, նախաշինարարական, շինարարության և հետշինարարական փուլերու

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի յուրաքանչյուր եւրաժողացի
համար իրականացվում է բնապահպանական ազդեցության առափառություն՝ ԱՀԲ
Անվտանգության քաղաքականության դրույթների (2009թ.) և ՀՀ օրենսդրության համապատասխան։



Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման N 2719193 վկայականը, Արարատի մարզի, Փոքր Վեդի համայնքի ղեկավարի կողմից տրված 01.09.2020թ. N9 ճարտարապետահատկագծային առաջադրանքը (նախագծման թույլտվություն): Հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 03-096-0029-0001: Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1.9 հա, նոր կառուցվող մասնաշենքերի ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 3745,0 ք.մ, կաթսայատան մակերեսը՝ 30,0 ք.մ, բարեկարգվող (սպլանք, աստիճաններ, բացողյա սպորտային, խաղային հրապարակներ և այլն) մակերեսը՝ 2661,0 ք.մ, կանաչապատման մակերեսը՝ 7194,0 ք.մ, նախատեսվող աշակերտների թիվը՝ մինչև 400 աշակերտ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» <<օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, <<Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի, Մարգար Հովհաննիսյան փողոց 26 հասցեում նախատեսվող դպրոցի կառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 ք.մ-ը (դպրոցի կառուցապատման մակերեսը կազմում է 3745,0 ք.մ):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի (ՆԳՀ) պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» <<օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Նկարգրական մաս. Նոր կառուցվող դպրոցը գտնվում է <<Արարատի մարզի, Փոքր Վեդի համայնքում, որի տեղանքը Արաքս գետի լայն հովիտն է, կուտակումային (նստվածքային-բերուկային) ռելիեֆի տիպով, որտեղ նախալեռնային ռելիեֆի ծները սահուն անցնում են ամբողջովին մշակվող դաշտավայրի ռելիեֆի ծնին: Տարածաշրջանում բացակայում է նորագոյն հրաբխականությունը: Զկան ռելիեֆ առաջացնող արտածին երևույթներ՝ սողանքներ, չինգիլներ, քարանձավներ, սելավային բերուկներ և այլն:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը հարթ է, գտնվում է Արարատյան լճակումույսատիվ հարթավայրի սահմաններում: Ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 821.5-822.5 մետրերի սահմաններում (տարբերությունը՝ 1.0 մ):

Ներկայացվող տարածքում գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 0.5 մ: Ստորերկրյա /գրունտային/ ջրերի հորիզոն մինչև 8 մ կատարած հորատանցքերում չի հայտնաբերվել:

Ներկա դրությամբ տարածքում առկա են դպրոցի հին շինությունները, հին կաթսայատունը, ցանկապատը, ջրամակակարարման, էլեկտրամատակարարման և կոյուղու ենթակառուցվածքները:

Տարածքում ծառերը աճում են հիմնականում հողատարածքի սահմանագծով և դպրոցի շենքին մոտ սիզամարգերում:

Նոր դպրոցը կառուցվելու է գոյություն ունեցող դպրոցի տեղում:

Նախատեսվող դպրոցական համալիրը բաղկացած է միմյանցից սեյսմիկ կառաններով անջատված և ներփակված տարածքներով իրար միացված 8 մասնաշենքերից (A, B, C, D, E, F, G, H մասնաշենքեր): Բոլոր մասնաշենքերը միասին կազմում են ամբողջական համայնք: Ինչ առանձնացված սեյսմիկ կարանները հնարավորություն են ընձեռնում բարակապահպետ մասնաշենքերի սեյսմակայունությունը: Դպրոցի տարածքում նախատեսվում է անցույնին համար՝ նստատեղերով, ասֆալտե ծածկույթով խաղահրապարակ:



ճանապարհներ, հարթակներ: Մասնաշենքերի պարագծով նախատեսվում է նոր սալվածք (բրեկչա տիպի ծածկով): Դպրոցի տարածքի սահմանագծով նախատեսվում է նոր ցանկապատ:

Դպրոցի հատակագծային լուծումները ունեն պարզ երկրաչափական հորինվածք և բաղկացած են 1÷2 հարկանի տարրական և միջին ուսումնական մասնաշենքերից, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճներից, ինչպես նաև ադմինիստրատիվ մասնաշենքերից:

Ենթակա դպրոցի ֆունկցիոնալ կառուցվածքից, հիմնական բոլոր մասնաշենքերում նախատեսված են առանձնացված մուտքային բլոկներ, որոնք ապահովում են տարբեր տարիքային խմբերի անխափան հոսքերը: B և G մասնաշենքերն երկու հարկանի են, իսկ A, C, D, E, F, H մասնաշենքերը մեկ հարկանի են: Դպրոցի կառուցվածքը գլխավոր հատակագծի վրա տեղակայված են մոտ 93.5 մ երկարությամբ և 78.75 մ լայնությամբ չափերով տեղամասի վրա: Ճարտարապետական 0.00 նիշը համապատասխանում է 822.90 մ բացարձակ նիշին:

Շենքի կոնստրուկտիվ սիեման լուծված է երկաթբետոնյա կմախճով, միաձոյլ ծածկերով և դիաֆրազմա ծառայող միաձոյլ երկաթբետոնյա արտաքին և ներքին պատերով: Արտաքին պատերը և վերնածածկը ջերմամեկուսացվում են, համաձայն գործող նորմերի և տնտեսական նպատակահարմարության սահմաններում: Հիմքերը ժապավենային են: Հիմնատակի գրունտը խոշորաբեկոր բազալտներ են:

Դահլիճային մասնաշենքերի ծածկը լուծված է պողպատյա ֆերմաներով և կապերով: Տանիքները լանջավոր են և հարթ:

Միջանցքներում և սրահներում հատակները նախատեսվում են կերամոգրանիտե սալերից, դասարաններում, դահլիճներում՝ վինիլային 2մմ և 4մմ: Արտաքին դոները, վինտրաժները և պատուհանները նախատեսվում են այսօմինե, ներքին դոները՝ ՄԴՖ: Նախատեսվում են ներքին հարդարման բարձրորակ աշխատանքներ: Շենքի ճակատները զարդարվում են դեկորատիվ սվաղով և ներկվում են:

Շենքի մուտքերի մոտ նախատեսված են թեքուղիներ: Նախագծով նախատեսված են հաշմանդամների համար սանհանգույցներ, նաև երկու վերելակ $m=630\text{կգ}$, $V=1.0\text{մ}/\text{վրկ}$: Նախագծով նախատեսվում է մասնաշենքերի ներքին ջեռուցման և օդափոխության համակարգ: Նախատեսվում են ներքին էլեկտրանուցման, ջրամատակարարման, կոյուղու ցանցեր նաև հակահրդեհային ազդանշանման համակարգ: Տանիքում նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ: Դպրոցի արտաքին ջրամատակարարման ցանցը միացված է տարածքում առկա ցանցին:

Դպրոցի ջեռուցումը իրականացվելու է նոր կաթսայատան միջոցով, որում տեղադրվելու են ջրաջեռուցիչ կաթսաներ: Կաթսաները համալրված են լինելու ժամանակակից գազային այրիչներով, որոնք ապահովելու են ազոտի օքսիդների առաջացման նվազագույն մակարդակ և պլանային ռեժիմում՝ ածխածնի օքիդի գործնականում բացակայություն: Ծխագագերի արտանետումնը իրականացվելու է ծխնելուցի միջոցով, որի բարձրությունը պետք լինի առնվազն 1.2 մ ավելի բարձր մոտակա շինության բարձրությունից:

Դպրոցի տարածքում առկա ծառերը շինարարության ժամանակ հիմնականում տեղափոխվելու են, մի մասը նաև հատվելու է: Փոխարենը, դպրոցի տարածքում նոր կանաչապատ գոտիներ և ծառատուններ են կազմակերպվելու: Ըստ նախնական գնահատման հատման ենթակա կլինի 22 ծառ, հիմնականում բարդի և թխկի տեսակի:

Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանաչապատման համար օգտագործվելու է սոսի, կաղնի, գնդածն ակացիա, հացենի և թփատեսակներ: Այս տեսակները հարմար են Փոքր Վեդի գյուղի լանդշաֆտին և բնակլիմայական պայմաններին: Նախատեսվում է ընդհանուր առմամբ տնկել 240 ծառ:

Նախատեսվող գործունեության շրջանակներում կառուցապատման բոլոր աշխատանքները նախատեսվում է իրականացնել դպրոցի ներքում և տակածության սահմաններում:



Քանդման ենթակա են տարածքում առկա դպրոցի երեք մասնաշենքերը, տաքանցումը և կաթսայատան շենքը:

Քանդման արդյունքում առաջացող շինարարական թափոնները կազմում են՝ 1270 տ, հանվող հողային զանգվածը՝ 143.8 մ³:

Առաջացած թափոնները քանդման աշխատանքների ավարտից հետո կտեղափոխվեն Փոքր Վեդիի համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Հողային զանգվածը կպահպանվի հանման վայրերում, որը աշխատանքների ավարտից հետո կօգտագործվի տարածքի բարեկարգնման համար:

Շինարարության ընթացքում օգտագործվող շինանյութերն լինելու են սերտիֆիկացված, համապատասխանելու են << օրենսդրությամբ գործող ստանդարտներին և ձեռք են բերվելու լիցենզավորված մատակարարների կողմից:

Համաձայն <<ԸՆ 11-6.02-2006 «Մեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի << տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում և հորիզոնական արագացման առավելագույն մեծությունը կազմում է Amax=0.4g:

Դպրոցական համալիրի բոլոր մասնաշենքերն ապահովված կլինեն հակահրդեհային սարքավորումներով և հիդրանտներով, ինչպես նաև էվակուացիոն ելքերով: Բոլոր հարկերում աստիճանավանդակները և էվակուացիոն ելքերը նախատեսված են ըստ գործող նորմերի և ապահովում են սեյսմիկ և հակահրդեհային պահանջները:

Աշխատանքային նախագծով բոլոր մասնաշենքերում նախատեսված է ջեռուցման ներքին համակարգ, որի համար որպես ջեռուցման աղբյուր հանդիսանում է տարածքում նախատեսված կաթսայատունը:

Էներգախնայողության նպատակով նորակառուց դպրոցի տանիքի շեպի վրա կտեղադրվեն արևային վահանակներ, որոնց արտադրված էներգիան կօգտագործվի դպրոցի էլեկտրական սնուցման համար:

Շինարարական աշխատանքները իրականացնելու համար նախատեսվում է օգտագործել հետևյալ տեխնիկական և տրանսպորտային միջոցները.

ավտոկոռունկ՝ 1½ հատ, բետոնատար մեքենա՝ 1 հատ, էքսկավատոր՝ 1 հատ, բեռնատար մեքենա՝ 2÷3 հատ:

Դպրոցը ներկայում գործող է, հետևապես ապահովված է էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերով և այլ ենթակառուցվածքներով: Ինժեներական կոմոնիկացիաների նախագծերը և սխեմաները նոր կառուցվող դպրոցի համար սկզբունքորեն մնացել են անփոփոխ: Շինարարության և շահագործման փուլերում դրանց ապահովումը կիրականացվի համաձայն գոյություն ունեցող պայմանգրերի:

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բարի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր է կատարում:

Դպրոցական համալիրի էլեկտրամատակարարումն իրականացվելու է շինարարական հատակագծերի և << գործող նորմատիվային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Նոր կառուցվող մասնաշենքի ներքին տարածքների էլեկտրամատակարարումն իրականացվելու է շինության առաջին հարկում տեղակայված էլեկտրամատակարարման սարքավորումների համար նախատեսված սենյակից:



Լուսավորության համար նախատեսվում է կիրառել փոքր հզորությամբ և բարձր աստիճանի լուսատվությամբ լուսատուներ (Էներգախնայող):

Էլեկտրամատակարարման ողջ համակարգը ապահովված կլինի հողանցմամբ և շանթապաշտպանությամբ:

Դպրոցի գաղամատարարումը նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող գաղամատարից, որն ապահովում է ներկայումս գոյություն ունեցող դպրոցի կարիքները:

Որպես հիմնական վառելիք կվիրառվի բնական գազը, որը կաթսաների այրիչներին մատակարարվելու է արտաքին ցանցից: Ձերմատարը հանդիսանում է ջուրը՝ $80-60^{\circ}\text{C}$ ջերմաստիճանային էջրով:

Օդափոխությունը շենքում նախատեսված է ըստ <<գործող նորմերի: Իրականացվում է ներածող-արտածող, բնական և արհեստական օդափոխություն: Դասասենյակներում օդափոխությունը իրականացվում է յուրաքանչյուր աշակերտին $20\text{մ}^3/\text{ժ}$ օդաքանակ սկզբունքով, ինչպես նաև դասասենյակներում ապահովելով 2-ապատիկ օդափոխություն:

Նախագծով նախատեսված է աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը կբարեկարգվեն և կկանչապատվեն:

Կանաչապատման աշխատանքներում կօգտագործվի շինարարական աշխատանքների ընթացքում նախօրոք հանված և պահեստավորված հողաբուսաշերտը:

Բուն կանաչապատման աշխատանքները նախատեսվում է իրակաացնել 7194,0 ք.մ տարածքում, որտեղ կանաչապատ գոտին կընդլայնվի տարբեր սիզամարգերի, ծառատեսակների համադրությամբ և կիանձնվի դպրոցի տնօրինությանը:

Դեկորատիվ տեսք ապահովելու նպատակով կանչապատման համար օգտագործվելու է սոսի, կաղնի, գնդածև ակացիա, հացենի և թփատեսակներ: Այս տեսակները հարմար են Փոքր Վեդի գյուղի լանդշաֆտին և ընակլիմայական պայմաններին:

Կանաչապատման աշխատանքներն նախատեսվում է իրականացնել՝ առաջնորդվելով <<Կառավարության 08.02.2018 թվականի N108-Ն որոշման դրույթներով:

Տարածքում առկա է ոռոգման համակարգ, որը աշխատանքների դնթագրում կվերանորոգվի:

Բարեկարգման աշխատանքները կիրականացվեն «Բարեկարգման գլխավոր հատակագծին» համապատասխան:

Նախատեսվող գործունեության ժամանակ առաջացող թափոնները իրենցից ներկայացնում են շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ, ինչպես նաև անձնակազմի կողմից առաջարկած կենզաղային աղբը:

Շինարարական աղբի ծավալը կազմում է՝ 1270 տ, որը համաձայն << բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25.12.2006թ. N 430-Ն հրամանի համապատասխանում է «Պատի բետոնե իրեր, այոներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներ» տեսակին, դասիչ՝ 3990120001004, վտանգավորության դաս՝ IV: Կենցաղային աղբի ծավալը շինարարության ողջ ժամանակահատվածի համար գնահատվում է՝ 50÷60 մ³:

Դպրոցի շենք-շինուայինների քանդման արդյունքում առաջացած շին նյութերը, աղբի ծավալները, պահման վայրը և այլ հարցեր կարգավորվելու են համաձայն << կառավարության 2019 թ. փետրվարի 6 թիվ 87-Ա որոշմամբ:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նախակով նախատեսվում է՝



Շինարարության նորմատիվ ժամկետը որոշվել է ըստ օրացույցային ժամանակացույցի և կազմում է 26 ամիս որից 2 ամիսը նախատեսված է գոյություն ունեցող մասնաշենքերի ապամոնտաժման/քանդման աշխատանքերի համար:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի տարածք նախատեսվում է իրականացնել Ֆ.Ղազարյան և Մ.Հովհաննիսյան փողոցներից, իսկ շինարարության տարածքը սահմանազատել՝ ելնելով անվտանգության տեխնիկայի կանոններից:

Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների տեղակայման համար առաջարկվում է օգտագործել շինարարակի ազատ տարածքները:

Առաջարկվում է նախատեսել կոնտեյների տիպի հատուկ շինություններ՝ պահակատուն, գրասենյակ, հանդերձարան, լվացարան-ցնցուղարան, ճաշարան, ինչպես նաև պահեստներ, բիոզուգարաններ, աղբի տարրաներ և այլն: Ժամանակավոր տնտեսության շենքերի և շինությունների վերջնական ցանկը կճշտվի շինարարության ընթացքում:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեթենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ դրանք վաճակալել այլ կազմակերպություններից:

Շինարարության նախապատրաստական փուլում իրականացվելու են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի արտաքին տարածքի սահմանազատում ժամանակավոր ցանկապատով, լուսավորությունով և արգելափակիչ նշաններով,
- գոյություն ունեցող օդային մալուխի ժամանակավոր ապամոնտաժում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում (ըստ անհրաժեշտության),
- միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է իրականացնել լիցենզավորված շինարարական ծեռնարկություններից և գիսավոր կապալառու կազմակերպության արտադրական բազայից, որը իրականացվելու է հետևյալ սխեմայով.

- շաղախը և բետոնը կառաքվեն Փոքր Վեդի համայնքի մոտակա բետոնաշաղախային հանգույցից, որն պետք է ունենա չափաբաժին կշռող սարքավորումներ՝ ապահովելու համար նախագծում նախատեսված բետոնի դասը իր բոլոր ցուցանիշներով: Առաքումը նախատեսվում է իրականացնել մասնագիտացված տրանսպորտային միջոցներով և այնպիսի պարբերականությամբ, որպեսզի ապահովի շին. աշխատանքների անընդհատությունը,
- առանձին ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերն ավտոմոբիլային փոխադրամիջոցներով կրերվեն անմիջապես շինարարական իրապարակ, որտեղ կիրականացվի դրանց տեղադրումն ու պահեստավորումը,
- հարդարման նյութերը կարող են առաքվել ինչպես անմիջապես շինհրապարակ, այնպես էլ շինարարական կազմակերպության բազա՝ հետագա առաքման նպատակով:

Փոխադրամիջոցների և շինարարական մեթենաների տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը նախատեսվում է իրականացնել մեթենայացման բազայում:

Դպրոցի նոր շենքի կառուցման ընթացքում օգտագործվելու են հետևյալ շինարարական նյութերը՝ սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, երեսապատման բարձրորակ նյութեր, ավագ, ցեմենտ, ներկանյութեր, մետաղական կոնստրուկցիաների պայմանագիրը:

Շինարարության ընթացքում բնակետություններից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակի տարածքների ջրանի, հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար:

Ըստ նախնական հաշվարկների ջրանի համար ջրի ընդհանուր ծախսը գումար 696.0 մ³



Որպես կանոն, իրականացվող շինարարության ժամանակ ժամանակավոր ջրամատակարարման ջրի հիմնական աղբյուր է ծառայում համայնքային ջրամատակարման ցանցը, իսկ շինարարական աղբյուր է կողմից նախագծվում և կառուցվում է մեկ համակարգային ժամանակավոր ջրամատակարարման ցանց, որը շինարարության ողջ ընթացքում ապահովելու է անհրաժեշտ ջրապահանջը:

Շին. իրապարակը նախատեսվում է ապահովել բիոզուգարաններով, որոնց տեղադրումը, շահագործումն ու ապամոնտաժը կիրականացվի արտադրող կազմակերպության սերտիֆիկատների և նորմատիվների հիման վրա:

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնցից խոսափելու համար անհրաժեշտ է հետևել անվտանգության նախազգուշական միջոցառումներին:

Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողության իրականացնող մարմնի կողմից:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունը և վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- ջրանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևության հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն տեղական ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կներկայացվի Փոքր Վեդի համայնքապետարանի համաձայնեցմանը,
- կանաչապատման աշխատանքներում կօգտագործվի շինարարական աշխատանքների ընթացքում նախօրոք հանված և պահեստավորված հողաբուսաշերտը,
- շինարարության և շահագործման փուլում կանաչապատ տարածքների ոռոգումն նախատեսվում է իրականացնել տարածքում առկա ոռոգման համակարգի միջոցով, որը աշխատանքների ընթացքում կվերանորոգվի,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից առողջի առաջացմանը ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների համապահանջական վիճակը և իրականացնել կարգաբերումներ:



Դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղած հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ:
 2. Օգտագործված մեքենայական յուղերով ու քայլութերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ:
 3. Աղմուկի, թթառումների և տատանումների մշտադիտարկումներ:
 4. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կովտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն << կառավարության 2020թ. հունիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:
 5. Կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի գոյություն ունեցող և նոր տնկված ծառերի աճի, խնամքի համար:

Նախատեսվող գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանն ու բացառմանն ուղղված միջոցառումների գումարային ծախսերը գնահատվում են 22 մլն. << դրամ, որը ներառում է նաև մշտադիտարկման, ջրցանման, կանաչապատման և աղբահեռացման ծախսերը:

Պարբեռաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի, Փոքր Վեդի համայնքապետարանի շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Առողջապահության», «Արտակարգ իրավիճակների», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի», «Պաշտպանության» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», «Արարատի մարզպետարանից» ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կըրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կյինեն թույլատրելի նորմայի սահմաններում։ Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ։

Փորձաքննական պահանջներ

- Դպրոցի շինարարական աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է պահպանել «առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանհիտարակենցաղային սենթերի» N 2.2.8-003-12 սանհիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել «քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՆ 1-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:
 - Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ են:
 - պարապապատել շինարարական իրապարակը, անցկացնել լուսավորության և տեղային արգելափակիչ նշաններ,
 - շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տպանական գանցով,



- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
 - շաղախը և բետոնը մատակարարում իրականացնել Փոքր Վեդի համայնքի մոտակա բետոնաշաղախին հանգույցից, բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել <<օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Փոքր Վեդի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Տարածքի կանաչապատման աշխատանքներն իրականացնել Փոքր Վեդիի համայնքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի համաձայն, որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը:
5. Շինարարության ընթացքում պահպանել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:
6. Համաձայն <<կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 2 հավելվածի 13-րդ և 15.1-րդ կետերի՝ դպրոցի շենքի կառուցման նախագիծը ենթակա է պետական համալիր փորձաքննության:
7. <<կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Արմստրոյ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված, Արարատի մարզի Փոքր Վեդի գյուղի, Մարգար Հովհաննիսյան 26 հասցեում գտնվող դպրոցի քանդման և նոր դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ

Վ. Վարդանյան



Ընդամենք՝ 9 էջ